Ծառայության և միջոցառումների ուղեցույցներ երիտասարդների համար

Այս սկզբունքներն ու ուղեցույցները նախատեսված են երիտասարդների և չափահասների ղեկավարներին օգնելու համար, երբ նրանք միասին խորհրդակցեն իմաստալի ծառայությունների հնարավորությունների և օգտակար, զվարճալի միջոցառումների ծրագրման ընթացքում: Այս սկզբունքներն ու ուղեցույցները կարող են օգտագործվել նաև որպես ցցի, ծխի և երիտասարդների խորհրդի ժողովների նյութ:

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Միջոցառումները պետք է ծրագրվեն և իրականացվեն քվորումի և դասի ղեկավարների կողմից՝ չափահաս խորհրդատուների աջակցությամբ: Միջոցառումները պետք է.

- Զորացնեն աճող սերնդի հավատքն առ Երկնային Հայրը և նրա Որդի Հիսուս Քրիստոսը և օգնեն երիտասարդներին ու նրանց ընտանիքներին առաջադիմել ուխտի արահետով, երբ նրանք բախվեն կյանքի մարտահրավերներին:
- Օգնեն երիտասարդներին իրականացնել փրկության և վեհացման աշխատանքը (տես *Ընդհանուր Ձեռնարկ. Ծառայել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում* [2020], 1.2, ChurchofJesusChrist.org):
- Ապահովեն երիտասարդներին աջակցությամբ և մասնակցությամբ ամրապնդելով քվորումի և դասի միասնությունը և կառուցելով նրանց փոխհարաբերությունները հասակակիցների, ղեկավարների և ընտանիքների հետ:
- Երիտասարդներին հավասարակշռված հնարավորություններ տրամադրեն ուրիշներին ծառայելու համար, ինչպես նաև հոգևորապես, սոցիալապես, ֆիզիկապես և մտավոր առումով զարգանալու համար (տես Ղուկաս 2.52):
- Ստեղծեն փորձառության հնարավորություններ, որոնք օգնում են երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց իրականացնել իրենց աստվածային դերը:
- Հետևեն ամբողջ Եկեղեցու անվտանգությանն առնչվող և այլ քաղաքականություններին, ինչպես նաև ուղեցույցներին (տե՛ս safety.ChurchofJesusChrist.org):

ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

Այս ուղեցույցները կարող են հարմարեցվել տեղական պայմաններին՝ տեղական ղեկավարների առաջնորդության ներքո.

- Հնարավորության դեպքում ծառայություն և միջոցառումներ իրականացրեք ամեն շաբաթ: Ծառայությունն ու միջոցառումները կարող են իրականացվել ավելի քիչ հաճախականությամբ՝ հիմնվելով քվորումի և դասի անդամների կարիքների և հանգամանքների վրա, բայց դրանք պետք է անցկացվեն առնվազն ամիսը մեկ անգամ:
- Օրացույց մշակեք առնվազն երեք ամիս առաջ: Սա կապահովի, որ նպատակային և դժվարին միջոցառումների հավասարակշռված բազմազանությունը, հիմնվելով վերը նշված սկզբունքների վրա, ծրագրվի այնպես, որ բավարարի քվորումի և դասի առանձին անդամների կարիքները:
- Երիտասարդների համար հնարավորություններ փնտրեք, որպեսզի նրանք բովանդակալից ծառայություններ մատուցեն անհատներին, ընտանիքներին և համայնքին: Հաշվի առեք քվորումի և դասի յուրաքանչյուր անդամի կարիքներն ու հետաքրքրությունները՝ միևնույն ժամանակ խրախուսելով նրանց գերազանցել իրենք իրենց:
- Քանի որ երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց հետ համատեղ միջոցառումները հատկապես օգտավետ են, հնարավորության դեպքում անցկացրեք դրանք ամիսը մեկ անգամ: Տարիքային ավելի բարձր խմբի երիտասարդների համար համատեղ միջոցառումները կարող են թերևս ավելի հաճախ անցկացվել:
- Երիտասարդներին համաժողովների և ճամբարների մասնակցելու հնարավորություն ընձեռեք:
    - 14 և ավելի բարձր տարիքի երիտասարդները ամեն տարի մասնակցելու են ԵՋՀ մեկ համաժողովի: Երիտասարդների համաժողովները և արշավները կարող են տեղի ունենալ այն տարիներին, երբ ԵՋՀ համաժողով տեղի չի ունենում:
    - Երիտասարդ կանանց ճամբարները և Ահարոնյան քահանայության քվորումի ճամբարները կարող են անցկացվել ամեն տարի:
    - Կարող են անցկացվել նաև լրացուցիչ, գիշերակացով ճամբարներ և միջոցառումներ: Երիտասարդ տղամարդկանց համար խրախուսվում է հնարավորության դեպքում լրացուցիչ, գիշերակացով երեքից վեց ճամբարների կամ միջոցառումների անցկացումը ամեն տարի:
- Քվորումի և դասի միջոցառումների անցկացման հետ կապված գաղափարների համար տես այս հղումը՝ ChurchofJesusChrist.org/youth/childrenandyouth/discover: Օգտագործեք *Երիտասարդներին զորացնելու համար* (2011) գրքույկը՝ որպես միջոցառումների պլանավորման աղբյուր:

ՆՅՈՒԹԵՐ

- *Ընդհանուր ձեռնարկ,* գլուխներ 10, 11, և 20
- YoungWomen.ChurchofJesusChrist.org
- AaronicPriesthoodQuorums.ChurchofJesusChrist.org

© 2019 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: 10/19: *Service and Activity Guidelines for Youth Document.*
-ի թարգմանությունը: Armenian. PD60009891 201. Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում